

Ծանուցագիր

Սույն ծանուցագրով դուք տեղեկացվում եք, որ համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների՝ Ձեր կողմից 11.01.2018թ.-ին նվիրատվությամբ ֆիզիկական անձ Վարդգես Աշոտի Սարգսյանից ձեռք է բերվել ք. Երևան, Կենտրոն, Ղ. Աղայան փ. 19/1 շենք 6 բն. հասցեում գտնվող անշարժ գույքի 1/2 բաժնեմասը:

Համաձայն 26.02.2015թ.-ի թիվ 01/19-Ս-825-81 ավարտական ակտի ֆիզիկական անձ Վարդգես Աշոտի Սարգսյանը հանդիսանում է ք. Երևան, Կենտրոն, Ղ. Աղայան փ. 19/1 շենքի կառուցապատող:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգրքի/ 140-րդ հոդվածի՝ ֆիզիկական անձը հանդիսանում է եկամտային հարկ վճարող, 141-րդ հոդվածի համաձայն վերոնշյալ գործարքը համարվում է եկամտային հարկով հարկման օբյեկտ:

Համաձայն Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են համախառն եկամտից նվազեցվող եկամուտներ: Նույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն նվազեցվող եկամուտ է համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ժառանգության և (կամ) նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացվող գույքը և (կամ) դրամական միջոցները: Սույն կետի կիրառության իմաստով՝ նվազեցվող եկամուտ չի համարվում Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ կառուցապատող համարվող ֆիզիկական անձից նվիրատվության կարգով ստացվող գույքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ֆիզիկական անձի կողմից կառուցապատող համարվող ֆիզիկական անձից նվիրատվությամբ գույքի ձեռքբերման մասով առաջանում է եկամտային հարկի պարտավորություն՝ Օրենսգրքի 150-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերի սանդղակով:

Ֆիզիկական անձը մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ՝ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին պետք է ներկայացնի եկամտային հարկի տարեկան հաշվարկ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.12.2016թ. N300-Ն հրամանի N3 հավելվածի, ինչը Ձեր կողմից չի իրականացվել:

Օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ բնամթերային /ոչ դրամական/ ձևով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ձևավորվող հարկման բազաներն ու ակտիվների սկզբնական արժեքները որոշվում են ազատ /շուկայական/ գների հիման վրա՝ ՀՀ կառավարության 09.03.2017թ.՝ N241-Ն որոշման N1 հավելվածով:

Հարկային պարտավորությունների հաշվարկման վերաբերյալ թիվ N61813/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության համաձայն՝ Ձեր չկատարված հարկային պարտավորությունը 13.12.2021թ. դրությամբ կազմել է 4.923.755 դրամ:

Նշված հարկային պարտավորությունները սահմանված ժամկետներում չկատարելու դեպքի առթիվ Դուք սույն ծանուցագիրը ստանալուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը ժամը 11:00-ին հրավիրվում եք ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի՝ ք. Երևան, Ս. Դավթի 87Ա հասցեով՝ վարչական վարույթի նախնական լուսններին մասնակցելու նպատակով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ համաձայն ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ Ձեր չկատարված վերը նշված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով: Ի կատարումն ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների առաջարկում ենք ետօրյա ժամկետում ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչություն ներկայացնել վերը նշված վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունները և/կամ առարկությունները:

Տեղեկացնում ենք նաև, որ վերը նշված պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հարկային մարմնի կողմից կարող է կիրառվել հարկ վճարողի դրամական միջոցների և գույքի արգելադրում ՀՀ հարկային օրենսգրքի 78-րդ գլխի համաձայն:

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության
հարկադիր գանձման և պարտավորությունների
կատարման ապահովման բաժնի
գլխավոր մասնագետ
հեռ. 010 309191 /9155/

Հ. Հակոբյան
15.04.2022թ.